


ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Redaction du Journal
Armenien
"Hantes Amoria" Vienne



Ա. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 13 ՆՈՅԵՄԲԵՐ 1896

ԹԻԻ 26

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1896 տարեշրջանի

Պոչկարիոյ համար տարեկան 8 ֆր

" " " 1/2 " 4 "

" " " 1/4 " 2 "

Արտատպանի համար " 1/2 " 5 "

Կանխիկ վճարելի

Համակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրժուիր եւ յարմար դատ-
ուածներն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:

Յրանալուց տար 20 սանիթի,
կրկնէ ունի տեղումներու համար
20 աւ 100 զեղ կը լինի:

ԿԱՐԵՒՐ ԱԶԳ

L'Arménie լրագրի խմբագրութեան
Տիար Մինաս Զերայ կը խնդրէ որ
թրքական գաղանձութեանց պատ-
ճառաւ այրեացած Հայաստանի եւ
սրբացած երկսեռ Հայ մանուկներ
իրեն տեղեկագրեն իրենց անուն,
ծննդավայր, տարիք, առողջական
վիճակ, եւն, որպէսզի շտապ ձրի
ընդունել տալ զանոնք անգլիական
բարեգործական հաստատութեան
մը մէջ: Հասցէն է,

Mr. Minas Tchérax, 33 De-Vere Gardens,
Londres, W.

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

Մեր այն բաժանորդներ որք
ցարդ չեն վճարած իրենց տարեկան
բաժնեգինը կամ մէկ մասը միայն
վճարած են, թող հաճին մինչեւ
նոյեմբեր 20 զրկել մեզ, ինչ որ կը
պարտին, որպէսզի չստիպուինք ա-
ւելորդ ծախքերու ենթարկուիլ,
բաժնեգիններու գանձումը յանձնե-
լով թղթատարական վարչութեան
կամ պուլկարական ազգ. պանդոխին:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Անցեալ կիրակի քաղաքիս եկե-
ղեցոյն մէջ կարգացուցաւ կա-
թոլիկոսական կոնգակը, որով Գեր-
Արքեպիսկոպոս վեհապետի կար-
գում է այցելու հովիւ Պուլկա-
րահայոց:

Վեհ. Հայրիկը իր կոնգակով
հայրապետական սղոյն ու օրհնու-
թիւն նուիրելով առհասարակ ամեն
դասակարգի ազգայիններու, կը
յայտնէ թէ բարեյիշատակ Մկրտիչ
վարդապ. Տէրունեանի եղբրական
ե ողբալի մահէն յետոյ, հարկ տե-
սած է հանգուցեալ այցելու հով-
ուին յաջորդ մը նշանակել՝ անհովիւ
չթողելու համար Պուլկարիոյ հայ
գաղթականութիւնը:

Ամենայն Հայոց Հայրապետը կը
պատուիրէ իր հօտին հաստատուն
կալ եւ միայն հայկական աւանդու-
թեանց եւ կրօնի մէջ, սիրելի զիրար
քրիստոնէական սիրով, ինամք եւ

հոգ տանել մայրենի լեզուի ուսուց-
ման ազգ. վարժարաններու մէջ եւ
եղբայրաբար օգնել ազգակից կա-
րօտ պանդուխտներու, որ այնքան
շատ են ներկայ ժամանակին մէջ:

Նորընտիր այցելու հովիւ քա-
րոյ մը խօսելով բացատրեց Հայ-
րապետական կոնգակին իմաստը,
պարզաբանեց այն պատուէրները
զոր Հայոց Հայրիկը կուտայ իր
բոլոր Պուլկարաբնակ հոգեւոր զա-
ւակներուն եւ յայտնեց թէ հովուու-
թեան պաշտօնը ինչպիսի պարտա-
կանութիւններ կը դնէ իր վրայ
հանգէպ վեհ. Կաթողիկոսին եւ
պուլկարահայ ժողովուրդին:

Նշանակալից էր մանաւանդ քա-
րոյին այն մասը, որ կը յորդորէր
ժողովուրդը հաւտք ունենալ ա-
պագայի վրայ, որովհետեւ մեր
աղքը այնքան անթիւ աղէտներէ
յետոյ չյուսահատուիլով, չընկճուե-
լով ցոյց տուաւ իր ահագին բարո-
յական ոյժը եւ իր մեծութիւնը,
զոր ժառանգած է իր նախնիքներէն:
Թէեւ մենք ունիմք նաեւ խոշոր
թերութիւններ, սակայն ազանք
ինչպէս գեղեցիկ կերպով բացատրեց
Գեր. Քարոյիչը, մեզ բնածին յատ-
կութիւններ չեն, այլ մեր մէջ սը-
պրած մտած են այն բազմաթիւ
չիրմաներու պատճառով, զոր մեր
անկախութիւնը կորսնցնելէ յետոյ
ունեցած եմք յոյժ բազմազան ցե-
ղ'րու, օտար տարրերու հետ: (1)-
տարամուտ են ուրեմն այդ թերու-
թիւններ եւ ինքնին պիտի անհե-
տանան տակաւ, երբ հայ ժողո-
վուրդը ստանայ ազատ ապրելու ի-
րաւունքը, զոր պարտիմք օր մը
ձեռք ձգելու յոյսն ունենալ միշտ,
վստահ ըլլալով որ այնքան այր եւ
կին, մանուկ եւ չափահաս նահա-
տակներու սուրբ արիւնը չէ կարող
ի գործ թափուած ըլլալ:

Քարոյիչ Հայր սուրբը հարկ տե-
սաւ խրատել նորեկ գաղթական-
ները՝ հայ անուան արժանի վարք
ու բարք ունենալ մանաւանդապէս
Պուլկարիոյ, այս ազատ երկրին մէջ,
որ ազգային մեծ դժբաղդութեան
մը պահուն հիւրասիրտաբար իր դըռ-
ները բացաւ հայ գաղթականու-
թեան առջեւ եւ որոյ վարչութեան
ու ժողովուրդին դժգոհութեան ա-

ռիթներ տալէ գաղթականները
պարտին զգուշանալ:

Ս. Պատրարգէն յետոյ հոգ'հան-
դիստ կատարուցաւ բոլոր կոտոր-
եալ ազգակիցներուն համար, որք
նահատակուցան ազգին անուամբ:
Հայր Սուրբը կատարեց նաեւ օրհ-
նութեան արարողութիւնը սղբաց-
եալ նախկին այցելու հովիւ Մկրտիչ
վարդապետի գերեզմանին վրայ:

ՆՊԱՍՏ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ

Ինչպէս արգէն ծանուցած ենք,
անգլիացի Օրիորդ Ֆրայզեր քանի
մը շտապ առաջ վառնա հասաւ՝
կարօտ գաղթականներուն նպաստ
բաշխելու համար գործակցութեամբ
տեղական օնանշանագործին, որուն
անգամակից է Օրիորդը՝ Իրբե փո-
խանորդ տեղիս անգլիական փոխ-
հիւպատոսին:

Կարօտեալներու թիւին, վիճակին
եւ պէտքերուն վրայ հարկաւոր տե-
ղեկութիւնները ստանալէ յետոյ,
Օրիորդ Ֆրայզեր սկսած է, որքան
կարելի է, հոգալ աղքատիկներու
ամենէն անհրաժեշտ պէտքերը:
Մօտ հազար անձեր, որոնք պա-
տապարուած են հին հիւանդանոցին
եւ քարանձինայի շէնքերուն մէջ,
ամեն օր հաց եւ լոյս կ'ստանան՝
եւ շարքով երկու անգամ՝ նաեւ
միս, պանիր եւ ձիթապատուղ: Իսկ
քաղաքին մէջ ցրուած մօտ 500
կարօտ ընտանիքներ, որք հետզհետէ
շատնալու վրայ են, ամեն օր կ'ըն-
դունին միտին հաց:

Մանաւոր քննիչներու պաշտօն
յանձնուած է պուլիկ թաղերու
մէջ եւ ստուգել բազմաթիւ նոր
խնդրարկուներու վիճակը, որոնք
ամեն օր հիւանդանոց կը գիմեն
նպաստ խնդրելու համար:

Հարկ պիտի ըլլայ կարօտայնե-
րու մէկ մասին բնակարան ալ հայ-
թայթել, այնպէս որ Օրիորդ Ֆրայ-
զեր պիտի ստիպուի միայն ընթա-
յիկ ամսոյ համար վճարել 1500
ֆրանք իր տան վարձը:

Գաղով զգեստողէնի պէտքին,
զոր ձմեռային կոստիւմներ աւելան
ստիպողական դարձուցած է, Օրի-

որդին կարգադրութեամբ շուրջ 35
կիներ եւ աղջիկներ հիւանդանոցի
մէկ սրահին մէջ կը պատրաստեն
ճերմակեղէններ, շրջադաստներ եւ,
եւ այլն:

Օրիորդ Ֆրայզեր, որ Անգլիոյ
Հայկական նպաստամատոյց Յանձ-
նագործին նախագահ Ուէսթմի-
նըսթրի Գրայն եւ Քէմպրիճի հա-
մարտանին ուսուցիչ ու անուանի
գիտուն Տիար Ռէնտէլ Հէրսի կող-
մէն եկած է, ունի իր արամադրու-
թեան ներքեւ գումար մը, որ թէեւ
ինքնին կարեւոր՝ շատ փոքր է սա-
կայն գաղթականներուն ընդարձակ
պէտքերուն հետ բաղդատմամբ:
Ուստի Անգլիա Օրիորդը իր նուի-
րական առաքելութեան գործա-
գրութեան մէջ այնքան որբերու եւ
այրիկներու արցունքը սրբելու հա-
մար պէտք ունի նաեւ տեղական
օնանշանագործին նպաստներուն, զոր
լիայոյս ենք թէ մարդասէր անձեր
եւ պարտաճանաչ ազգայիններ չպիտի
վաճան հայթայթել:

Վարնայի մէջ վարձու սուններու
սակաւութեան պատճառով, որով
վարձագիններն ալ շատ բարձրացած
են, գաղթականներու մէկ մասը
զրկուած է Շուճիա եւ ուրիշներ ալ
հետզհետէ պիտի զրկուին հոն, ուր
օնանշանագործի անգամներէն մին
երթալով վարձած է 80 սենեակ:
Սակայն գաղթականներէ շատեր
կը դժկամակին երթալ Շուճիա,
վախնալով անշուշտ որ այստեղէ
հեռանալով գուցէ զրկուին Օրիորդ
Ֆրայզերի խնամքներէն. անհիմն է
իրենց այս երկիւղը, որովհետեւ
կարօտեալները Շուճիայի մէջ ալ
պիտի խնամուին միեւնոյն չափով,
ինչպէս վարնայի մէջ, որպէս Ազ-
նուափայլ Օրիորդն ալ հարկաւոր
գատեց վստահացնել մեզ: Պարտք
կը համարինք յորդորել մեր կարօտ
ազգայինները այս կողմէ դժուա-
րութիւններ չյարուցանել Օրիորդին
գործօնեցութեան գէժ, որոյ անձ-
նուէր, անխնայ աշխատութիւնը եւ
մեծ հոգածութիւնը յաւէտ շնոր-
հապարտ կոցուցած են ոչ միայն
կարօտեալները, որոց միւլթարիչ
հրեշտակն է ինք, այլեւ ամեն զգա-
յուն հայ սիրտեր:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Փարիզ 12 նոյ. 1896.

Ոչ. փարիզի հայ ուսանողներն ալ չէին կրնար անտարբեր և անգործ մնալ իրենց ազգային մեծ ազդեցին հանդէսը: Անոնք իրենց ազգային դատին կերպով իւր ծառայելու ցանկութեամբ գործեցին և կը գործեն իրենց կարողութեան և միջավայրի ներած չափով:

Տեղւոյ մէջ հայանպաստ շարժումը յառաջ բերելու խորհուրդը, պարագայից բերմամբ, թեկադրուած էր մէկէ աւելի հայ միտքերու, բայց այդ շարժման նախաձեռնութիւնը, կ'երեւի, վերապահուած էր հայ ուսանողներու, որոնք, իրենց ընկեր և խորհրդակցան ունենալով փարիզական ազգայնոց գործելու յօժար և յարմար մասը, անցեալ տարւոյ հոկտեմբերի 13 ին կազմակերպուեցան «Հայրենասիրական Մասնաժողով փարիզի հայ ուսանողաց» անուան տակ, և անմիջապէս սկսան գործի:

Գործը դժուարին էր, ըստ արժանիքի իրենց առջեւ ունէին մեր ազգային դատը ճանչցունել մի այնպիսի ժողովուրդի որ, հակառակ իր ասպետական աւանդութեանց, ժամանակ մը ա՛յնքան թերհաստ հանդիսացաւ մեր ազդեցութեան առջեւ, եւ հետեւապէս, ա՛յնքան ժխտ՝ մեր տարաբաղդ ազգայնոց համակերպու և օգնութեան աջ կարկուռութիւն մէջ: Հայ ուսանողներ իրենց առաջին քայլին իսկ հանդիպելով խոչնդոտներու. չը վհատեցան: Վստահ իրենց ջատագոված գաղտնի արդարութեան վրայ, դիմեցին խմբագրատունէ խմբագրատուն. ընդունուեցան քիչ անգամ ջերմ կերպով, երբեմն պաղ կերպով, և մերժուեցան յաճախ: Ինչ ինչ նկատուեցան փրանսական մամուլի բերանը կը գոցէին ճշմարտութիւնը խօսելու: Կարգ մը յայտարարութիւններ, և մանաւանդ ամսոյս 3 ին, փրանսական երեսփոխանական ժողովին մէջ Պ. Ժօրէսի ըրած յայտարարութիւնը, տարակոյսի տեղի չեն թողուր թէ լուսաւորութեան այս ոստանին մէջ իսկ լուսութիւնը ոսկեբեր վաճառք մը դարձած է: Եւ երանի՜ թէ լուսին միայն թեւր

թերէն ոմանք, անպատկառ, ստակալի հակառակութիւն կը յարուցանէին մեր դատին և մեր ազգին դէմ: Քաղաքական աշխարհին մէջ ալ հայերու համակերպութիւնը քիսաւորներու թիւէն աւելի ցանցաւ էր: Չը նայելով այս անպաստ հանգամանքներուն, գործելու էր անընդհատ և անվատ, որովհետեւ հայուն ազգակող և բազմապատկառ վերքերուն ու պէտքերուն առջեւ ցոյց տրուած վհատութիւն՝ պիտի նշանակէր վատութիւն: Եւ ահա մեր երիտասարդներու յամու ջանքեր սկսան արդիւնաւորել: Անոնց ջատագոված գաղտնի նեցուկ կանգնել խոստացան և կանգնեցան Ռօշֆօրի պէս անկուն և Տիկին Սէվէրինի պէս փափկասիրտ հրապարակալիներ, Ժօրէսի և Ռօշի պէս դիւթիչ հրապարակախօսներ, Լը Ռօս Պօլիէօյի պէս հեղինակաւոր բրոֆէսէօններ, Կոմ տը Մէօնի և Ֆօշէի պէս պերճախօս երեսփոխաններ, եւլն. եւլն: Կ'ամուլ մէջ հայերու դէմ հալածանքն ու զրկարարիչ պատկերները դադարեցան: Գարձեալ նոյն այդ երիտասարդներու մասնաժողովը, իր անձուկ միջոցներով, կազմակերպեց հայերէն և ֆրանսերէն միթիւններ և բանախօսութիւններ, և ի լոյս ընծայեց ու ձրիարար ցրուեց Լը Ռօս Պօլիէօի նշանաւոր բանախօսութիւնը, որ մեծ դարկ տուաւ սկսուած շարժման: Եւ ահա վրայ հասաւ Կ. Պօլսոյ վերջին մեծ դէպքը, որով շարժումը ստացաւ աւելի մեծ համեմատութիւն:

Այս միամեայ համաստ գործունէութեան պսակ ըլլալու սահմանուած էր՝ ֆրանս. երեսփոխանական ժողովոյ ամսոյս 3 ի նիստին մէջ հայկական հարցի նկատմամբ դրուած հարցապնդումը, զոր պատրաստելու նախաձեռնութիւնը՝ եւ զայն ամեն հարկաւոր ծանօթութիւններով և վկայաթղթերով զինելու խնամք աշխատանքը քիչ պատիւ չ'են բերեր փարիզի հայ Ռատոնոզայ Հայրենասիրական Մասնաժողովին:

Ի նկատի ունենալով այն իրողութիւնը թէ, Սասնոյ կոտորածը գրեթէ աննկատ անցաւ ֆրանսական մամուլի մէջ, և թէ, տարի մը առաջ

հոս մեր խնդրով գրեթէ ոչ մի ֆրանսացի չ'ըջօրէն չէր դադար, առիթ ունինք ուրախանալու որ այսօր այս երկրին մէջ բերաւորներ կը համակրին Հայերուն: Հայանըպաստ մասնախումբեր կազմուեցան ամէն կարեւոր քաղաքներու մէջ: Հայաստանի և Կ. Պօլսոյ կարօտեալ հայերուն ի նպաստ հանգանակութիւններ կը շարունակուին: Օգտուելով այս բոլոր միթիւրական հանգամանքներէ՝ փարիզի հայ ուսանողներ և ֆրանսաբնակ բոլոր ազգայինք պարտին բազմապատկել իրենց ջանքեր, լաւ եւս զօրացնելու համար հանրային կարծիքն ի նպաստ մեր դատին: Հաւանական է որ հանրային կարծիքի նշանակութիւնը թուրք կառավարութեան զգացնելով՝ զայն ի զգաստութիւն հրաւիրելու մէջ՝ Հանթօ աւելի բազմաւոր ըլլայ քան Լօրտ Սօլլպէրի:

Յամառ Յաւառոյ մը

ԷՎԷՐԷԿԻ ԿՈՏՈՐԱԾԸ

(Մասնաշարժներու նամակներէ քաղաքացի)

Էվէրէկ գիւղաքաղաքը ունի մօտ 1600 տուն բնակիչ, որոց միայն 400ը թուրք են, իսկ 1200ը հայ: Էվէրէկէն տասը վայրկեան հեռի հանդիպակաց բլրակի մը վրայ է Ֆէնէսէ զուտ հայաբնակ գիւղը՝ 600 տուն բնակիչներով:

Տէվէլի, Սիւնէրիկ, Սօյսարը և Սէնտիւրմէքէի թուրք գիւղերու խոժանը կանխաւ տեղի ունեցած կարգադրութեան մը համաձայն հաւաքուելով, հոկտեմբեր 18 ին ուրբաթ օրը, կէս օրին յարձակեցան Էվէրէկի վրայ. նախ խառնութեանը կողմաւորներ և կոտորեցին այն հայերը, զոր ձեռք անցուցին. յետոյ կարգը եկաւ տուներուն, որոնք նոյնպէս կողմաւորուեցան և հրդեհուեցան. 36 տուն բոլորովին այրած և միւսիք դարձած են. կատաղի խուժանը գնտակահար վերաւորեց այն հայ երիտասարդները, որ կը ջանային հրդեհին առջեւն առնել: Թուրք գիւղացիներու մէկ մասն ալ քաղաքին շրջակայ ճամբաները բռնած ուսպանաւ և այն հայ ճամբորդները, ու

րոնք գիւղերէն կը վերադառնային Էվէրէկ:

Յարութիւն, Կարապետ և Աստիկ անուն երիտասարդները, որոնք Պօլսէն հայրենիք կը վերադառնային, ճամբուն վրայ, Էվէրէկէն կէս ժամ հեռուն կ'առնէն կոտորածին գոյժը, կ'ուզեն փախչիլ ու ապաստանիլ մերձակայ թուրք գիւղ մը, ուր չարաչար կ'սպաննուին բիրերով ու քարերով:

Երկար ժամանակ հրդեհին, կողմաւորներու և կոտորածին անտարբեր հանդիսատես ըլլալէ յետոյ՝ ոստիկանութիւնը քաղաքին թուրք բնակիչներուն մէկ մասին աջակցութեամբ կը միջամտէ և կարգիլէ խուժանին վայրագութիւնները:

Եկեղեցին ու դպրոցը լեցուած են կողոպտուած ու վիրաւորուած երկուսն բազմութեամբ: 80 ի չափ վիրաւորեալներ կը համուրին. իսկ սպաննուածներուն ստոյգ թիւը յայտնի չէ. միայն քահանայի ձեռքով գերեզմանատան մէջ թաղուած են 60 հոգի:

Քաղաքէն դուրս սպաննուածներու դիակներ կոտորածէն յետոյ 8-10 օր շարունակ գտնուեցան ու քաղաք բերուեցան:

Կողոպտուած ապրանքներուն արժէքը կը հաշուուի մօտ 3000 օսմ: ոսկի:

Կառավարութիւնը ցոյցի համար հարցաքննութիւններ կը կատարէ և կը լսնորարկէ շատ մարդիկ, որպէս թէ յանցաւորները գտնելու և պատժելու նպատակով:

Սպաննուածներու մէջ են Էվէրէկի առաջնակարգ դատակարգէն Տօնիկ Հաճի Միլլէքնիսան և իր կինը Կիւլվարդ, Յովհաննէս Քէշիշեան, Հ. Եղիա Շիշիկեան, Խաթուն Բօշայեան, Գրիգոր Յովհաննէս, Կարապետ Մօմճեան ևն. ևն: (*)

(*) Պօլսէն առնուած նամակներ կիմացնեն թէ զրոյցի մը համեմատ՝ Էվէրէկէն յետոյ Ֆէնէսէ գիւղն ալ մատնուել է մարդաբան զաններու վայրագութեանց:

Ծ. Խ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՇՄԱՐՆԵՐ

Անցեալ երկու շաբաթները նշանակալից եղան. . . գիւտնադիտապէս: Դիւտնադիտութիւնը երբեք այնքան դիւային եղած չէ, կարծեմ որքան կ'ըլլայ հիմակ այն տեսակ մը աճապարաններուն ձեռքին մէջ որոնք նախարար կամ նախարարապետ անուան ներքե ազգերու ճակատագիրները տրամադրելու փրքուն յաւակնութեամբ կը յոխորտան: Ասոնք մեծագոյն ծիծաղողներն են ժողովրդային տաք իրարատնցումներուն, սրտազեղումներուն

ընդ և հրատապ ըզձանքներուն. ժողովուրդը թող յուզուի, աղաղակ բարձրացնէ, սպառնալիքներ տեղայ, անէծք ժայթքեցնէ, երկիւղալի տեսարան մը պարզելով. իր ձայնը, ըստ ինքեան ահաւոր, կը հանդիպի սակայն անզոր պատուարի մը, որուն վրայ կը մարի կը նուաղի. այս պատուարը դիւտնադիտութիւնն է, որ բան մը մտիկ չ'ընէր, խուլ է կարծես, սիրաչունի իր մէջը, երակներն արիւնով չեն ուռած. սառնեղէն էութիւն մը որ տաքէն չազդուիր, պաղութիւն կը տարածէ իր տիրած միջնորարին մէջ:

Ըսինք որ անցեալ տասնհինգ օրեակը յղի եղաւ քաղաքական

կարեւոր դէպքերով. անցողակի ըսեմ որ այս յուլութիւնը անյաջող արդիւնք պիտի ունենայ գուցէ և վիժած մը դուրս պիտի տայ: Պ. Հանթօն, արտաքին գործերու նախարարը ֆրանսական ազնուամեծար ազգին, շնորհ ըրաւ իր մեղրածորան լեզուաւ բարբառել չալաստան անուն երկրին եղկելի վիճակին վրայ. ինքնաբերաբար չըրաւ սակայն այս բանը, չէ՛, քաղաքականապէս «հարցապնդում» ըսուած կատակերգութիւնը տեղի ունեցաւ Երեսփոխանական ժողովին մէջ և ատոր էր որ բարեհաճեցաւ պատասխանել մեծ քաղաքագէտը Պ. Հաւթօ: Անշուշտ բարեբախտութիւնը ունեցաւ իմանալու թէ Պ. Հաւթօն

նօթօ մեծ նորութիւն մը նետեց Եւրոպայի դիւտնադիտութեան սեղանին վրայ. ըսաւ որ, ուշադրութիւն, — և աս ըսածին վրայ խորին համոզում գոյացուցած ըլլալ կ'երեւնար — ըսաւ որ թուրքիա բարենորոգման կարօտ է և այս բարենորոգումը անյապաղ գործադրուելու է. և որպէսզի անյապաղ գործադրուի, Եւրոպական վեց մեծ տէրութիւնները իրենց աջակցութիւնը նուիրելու են օսմանեան կայսրութեան վեհապետին:

Ծափէ՛նք ուրեմն ֆրանսայի Պ. Նախարար: Հայ ազգին փրկութեան գործը այսքան մօտեցած չէր իր վախճանին, երանելի՛ դ. Հաւթօ, և եթէ ոչ արդի ժամանակիս

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքիզէն Դոր-Գաւրի գրուած թղթակցութեան մը մէջ կը կարգանք:

— Վստում կատարուած նոր խռովութիւններն առիթ են տուել գաղթականութեան նոր և աւելի մեծ հոսանքի: Ամբողջ Ալլաքիի գաւառն արգէն գատարկուել է, հայ չկայ: Իսկ եթէ վստում գաղթականութիւնն էլ այսպէս շարունակուի, հայաստանի այդ հայաշատ նահանգն էլ կենթարկուի Ալլաքիի վիճակին: Ալլաքիից եկած գաղթականներն մեծամասնութիւնը տեղափոխուել է Սալմաստի ու խօյի գաւառներում, որոնց նրանք վայելում են պարսկահայ զիւղացուն յատուկ հիւրասիրութիւն: Իսկ վստումի գաղթականութիւնը, կամ աւելի ուշիցն առած, վստումաբնակներն աշխարհի գաղթականութիւնը, մեծ մասով գաղթում է դէպի Երվան, նիւթական ապահովութիւն ձեռք բերելու նպատակաւ, սակայն ցաւովի է, որ, ինչպէս լսում ենք, նրանք սառն ընդունելութիւն են գտնում այդտեղ նոյն իսկ հարուստների կողմից: Ամօթ, բիւր աւթ, եթէ այդպէս է, մեր հաւատարմներն, որ գոնէ օրինակ չեն տաւում հայ գիւղացիներին, որոնք ամենայն սիրով յանձն են առնում հիւրասիրել իրենց արիւնակիցներին, մանաւանդ Երեւանի նահանգում:

Ներկայումս թուրքիզումն է գտնուում վստում պարսկական ընդհանուր հիւպատոս Միքէլ-Հիւսէին խանը, որը կապրածից յետոյ հրաժարուել է իւր պաշտօնից: Սակայն հիւպատոսն է, որը կատարած ժամանակ ապրտել է մի քանի հարիւր հայի կեանք մահուանից՝ տեղ ապրտելու հիւպատոսարանի մէջ: Բազմաթիւ գաղթականներ, ապահովութեան համար, հիւպատոսի հետ են եկել:

Դոր-Գաւր

Մարտիկայէն հսկա. 30 թուականով կիսմիջինն թէ շուրջ քսան հայ ընտանիքներ՝ բարեկեցիկ գաւառակարգէն, որոց կեանքը ու ինչքը վտանգի մէջ էր ի. Գալիս, Մար-

մէջ, անտարակոյս ապագայ հայութիւնը ցնծալիս պիտի տօնէ քուանորինակ և անորակելի . . . միտմտութիւնը:

Յետոյ Գ. Գամպունը կապապարւած ձեռակերպութիւնները կատարեց. Երբեք զենաց եկաւ, հեռագիր քաշեց, փոխադարձ շնորհակալութիւններ, գահունակութեան հաւանքներ, և գրեթէ իրազորութեան մօտեցած եղան այն բաները զորս պահանջած էր պերճախօս նախարարը, բարենորոգումները ըսելի կ'ուզեմ. այո, հաւանական է որ այս մարդոց պահանջած բարենորոգման մեծ գործը այսչափ քիչ բանի մէջ կը բովանդակի. և եթէ երջանիկ ըլլայի վայելելու Գ.

սիրիա հասնի են ուր պիտի սպասեն իւր յայտնի տեսնելու համար թէ թուրքիզ մէջ իրենք ինչ կ'իրարարենք պիտի տեսնեն:

ԹՐԳԱԿԱՆ ԵԼԵՒՄՈՒՏԸ

Կ. Պոլսէն Ֆրանքֆուրթէր Յայթութիւնի գրուած թղթակցութեան մը մէջ կը կարդանք հետեւեալը.

— Ֆրանսական դեսպան Տ. Գանսպօնի վերջին ունեւորութիւնը Սուլթանի մօտ՝ բացառիկ տեղափոխութիւն մը ունեցաւ և վերջացաւ երեք ժամի մէջ:

Տեսակցութեան առարկայն էր միմիայն թրքական երեւմտեան վերակազմութիւնը:

Սակայն Կ. Պոլսոյ գիւսնադիւտական շրջանակներու մէջ կը կարծաւ թէ երեւմտեան բարեփոխումն ծրագրելը, զոր Ֆրանսա կատարելէ, այնքան ընդարձակ և ամբողջական է, որ հաւանականաբար չպիտի կրնայ ընդունելութիւն գտնել Գանսէն: Սուլթանն ալ, հակառակ Տ. Գանսպօնի պնդումներուն, մարտից առ այժմ ու է պարտականութիւն ստանձնել այս մասին և խոստացաւ միայն հիմնապէս ուսումնասիրել խնդիրը:

Ընդհանրապէս կը կարծուի թէ միակ արգելքը, զոր առ այժմ կարելի է ձեռք բերել, Ընդհանրապէս վարչութեան մէկ ընդարձակագոյն միջազգայնացումը պիտի ըլլայ մեծագոյն իրաւասութիւններով:

Եթէ թուրքիա ընդունի տէրութեանց վերակազմական ծրագիրը, Եւրոպա իրեն պիտի ընէ 15 միլիոն ոսկիի փոխատուութիւն մը որոյ երաշխաւորութիւնը սակայն տէրութիւններն իրենք ուղղակի չպիտի ստանձնեն անտարակոյս:

ՄԻՋՐՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Նախորդ թուով ծանուցինք այս վարժարանին բացումը, որ կը խոստանայ վարժարանի կրթական գործին տալ բարձր չափ մը մշտմէջ, եթէ կարենայ հաւաքել բաւականաչափ թուով սանուհիներ և սաներ:

Այսօր կը փափաքենք մեր ըն-

հանօթօի սերտ մտերմութիւնը՝ կ'առաջարկէի իրեն գրաւ մը բռնել ինծի հետ թէ իր ենթագրած բարենորոգումներուն կաթիլն անգամ չի կրնար մարմին առնել այն երկրին մէջ ուր արեան հեղեղներ հոսեցան ու կը հոսին դէռ:

Գանք Գ. Սուլթանիին. այսմարդը տարին անգամ մը Լօրտ քաղաքապետին տունը կ'երթայ և շամբանէն երկու գաւաթներու մէջտեղ տեսակ տեսակ բաներ կ'ըսէ: Անգամ մը հուր և շանթ կը ժայթքեցէն իր ըրտական շուրթերէն, անանկ որ կարծես փոթորիկ մը կայ ուրիշ անգամ մը խաղաղիկ անուշիկ տարր մըն է որ քաղցրութիւններ կը բաշխէ ալ և ահեակ. ա-

թերցողներուն տալ կարճ տեղեկութիւն մը վարժարանին այժմեան վիճակին վրայ, ուրիշ անգամի վերապահելով աւելի ընդարձակ տեսողութիւն մը անոր ուղղութեան, ոգույն և ուսման յայտագրին մասին:

Վարժարանը ունի առ այժմ երկու դասարան, կրկնակ բաժանմամբ, որոնք կը համապատասխանեն պուշկար աղջիկներու կիմնադրային մէկ երկու կարգերուն: Ունի երախաներու դասարան մըն ալ, նոյնպէս երկու բաժանմամբ, որոց մին կը պարունակէ ընթերցանութեան քիչ մը վարժ, իսկ միւսը՝ նոր սկսող երախաներ:

Տեսչութիւնը, զոր կը վարէ Կ. Պոլսոյ հանրաժանութ. ուսուցիչ և դրագէտ Տ. Մ. Կիւրճեան, կը ջանայ օգտուել կիմնադրային ծրագրէն, անկէ ընտրանք առնելով ինչ որ անհրաժեշտ է հայ աղջիկներու կրթութեանը:

Ուսուցչական մարմինը կազմուած է՝ բացի տեսուչէն, վեց անձերէ, որոց մին Պոլսոյ կեդրոնական վարժարանի նախկին ուսուցիչ, և երկրորդը նոյն վարժարանին հինգերորդ դասարանի աշակերտներէն է, Գուլիարներէն ուսուցիչը վարժարանի պուշկար կիմնադրային շրջանաւոր, գծագրութեան ուսուցիչը Պոլսոյ գեղարուեստներու վարժարանէն վկայուած, և եօթներորդը Էմիլիանի Ճիմարանին շրջանաւորներէն է, որ պաշտօնավարած է ազգային վարժարաններու մէջ:

Ազգային կրթական տեսակէտով քաջալուրդութեան արժանի այս կրթական նոր հաստատութիւնը կը յանձնարարենք ծնողներու ու շաղկութեան և ամեն կրթասէր ազգայիններու բարեացակամութեան:

ԻԼՄԵՆ ՄԱՍՍՈՒՍ

Ապօնէլէրիմիլին պիւր գրամը շիմուից գատար քէնտի պօճալընը Էօթէմէմիլ Վէ Կախօտ պիւր մը գատարընը Էօթէմիլ օլտըղալընտան, նոյեմբեր 20 է գատար կէօնտէրմէլէրինի ըրճա իտէրիզ Վէ օլ կիւնէ գատար Էօթէմէմիլ կաղէթա պէտէլինին թահսիլի իչիւն Բօստա Վէ

աւջին անգամ իր յանցաւոր, արիւնուշա գաղան հոշակած անձերը հտքէն կ'եղայ անմեղ գառնուկ, նոյնպէս քաւութեան կը հոշակէ:

Լօրտ Սուլթանին ալ ըսաւ որ, չէ բան մը չըսաւ, իր պաշտօնակցին ըսածները վաւերացուց հաստատեց. տարբեր ըլլալով յայտարարեց որ Անգլիան — թէ և աշխարհագրական տեսակէտով Աստուած զինքը անջատ ստեղծած է ցամաքային Եւրոպայէն — հայկական խնդրին մէջ չի կրնար, մանաւանդ չի սիրեր առանձինն գործել, մէկ տեղ, եղբայրաբար պիտի գործեն: Ի՞նչ կրնանք ըսել. ասիկա տեսակ մը սիրահարութիւն է, գիւսնապիտական սիրահարութիւն որուն

Կախօտ Պանգա վասիթաւուն միւրահաւթ իթմէմիլ իզթիլա իտէճէկինտէն, պէօլլէ պիւր մէսարիֆէ պիլի տիւշար իթմէմէլէրի մէրճուտը:

Ապօնէլէրիմիլին պիւր գրամը իչիւն կաղէթամըղըն գըյմէթի հագգընտա 5. Վէ 21. Նօմէրօտա վէրմիլ օլտըղմըլ աթիտէթի իզահաթը պուրտաթ թէէթիտ իթմէթ իզթիլա կէօրիլմիլ տիր:

Կաղէթամըլ Գոնւար 4 տէն պաշլալալ, փեարվար Նիհայէթինէ գատար իքի հաթթատա պիւր տէֆա Նէշր օլտարադ, 6 ֆրանք Պուլկարի իչիւն Վէ 8 ֆրանք տըշալը իչիւն սէնէլիկ գըյմէթ թային օլտմըլ Կախ:

Փեարվար Նիհայէթինտէ գոհուր իտէն ետնկընտա կաղէթանըն ալիթիլալը Վէ Կաղլալը քեամիլէն մահվ օլտըղընտան, անլարըն եհնիտէն թէտարիքի իչիւն պիւր չօգ միւլըլալթ ու մէսարիֆաթը զախտէյէ Նիւշար օլտարադ, անճագ 3 1/2 ալ սօնրա «Իրաւունք» ը կէնիտէն Նէշր իթմէլէ մուաֆաթ օլալիլալթ. Վէ պու տէֆա ապօնէլէրին արդուար միւհիպ հէր հաթթա կաղէթայը չըգարմայա պաշլալտըղմըլտան, անըն հէր կէօնտա մէսարիֆաթը իքի գաթ օլտը. պու հէսապլէ սէնէլիկ 6 ֆրանքը 12 ֆրանգա թահվիլ իթմէթ լալըմ օլաճագալը իտէտէ, 3 1/2 ալ կաղէթա չըգարմաւորըղմըլ սէպէպլէ, 6 ֆրանգա Կաղընըլ իքի ֆրանգ զամմ իտէթէթ, պու սէնէնիւն Նիհայէթինէ գատար 8 ֆրանգ Պուլկարի Վէ 10 ֆրանգ տըշարը իչիւն գըյմէթ թային օլտար:

ՄԻՒԹԵՆԵՎ ՎԻՅԵ

Ինքերնախօնալ գօրէքօնտանս կաղէթաւընա նազարէն Տիւրքիլէր իլէ օլան մուհարէպէսինտէ գօմանտան թահիր բաշա մաղլուպ (յաղթեալ) օլմուսընտան նալի առքէրլէր անա իթաթ իթմէպլէրտի Վէ պու սէպէպլէն եհրինէ Ապտուլահ բաշա թային գըլընմըշալը միւշիլի մուամիլէյհ Տիւրքիլէրլէ մուհարէպէ իչիւն ասքէրլէր թօրլալթմըլ իտէտէ, Էօթէմէլէյն ալըղլարը թէէթիլէ իտիլմէթիքճէ

մեղ՝ Հայերուս չէ ինկեր արգելք ըլլալ. մաղթինք բոլոր սրտէ որ վեց մեծ տէրութիւններուն այս գաւառներէն սիրահարութիւնը յարաւտեւ ըլլայ, ևսալը չառնէ:

Բայց թու ներդաւիտ գտնուին սա փոքրիկ մէկ գիտողութեանս. մինչ իրենք իրենց այդ գոյութիւն սիրահարութեան հեշտութիւններովը կ'արքենան ու զիրար կը շոյեն կը գգուեն, անգին անտէր անթիկուսք ազգ մը՝ գազաններու ճիրաններուն մէջ բռնուած՝ կը տապալկի արիւնաթաթալ, գերմարդկային ճիգեր կը թափէ ազատութեան համար, և աւաղ, օգնութիւն կ'աղաղակէ ի դուր:

Ե.

